ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Մարտի 5-ի 2019 թվականի N 30 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 200 հազար դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-3-րդ հավելվածների:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

06.03.2019

VERIFIED BY CSP 06.03.2019 16:01:08 GMT+4

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ POGHOSYAN HUNAN 4005640117

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ մարտի 5 -ի
N 30 Ա -որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման

1. Ն.Բաբայան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Ս.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
3. Մ.Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
5. Ա.Սիմոնյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ ժ/պ
6. Թ.Կարապետյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ
7. Վ. Արզումանյան	«Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

04.03.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. մարտ 5-ի
N 30- Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման

Միջոցառման նպատակն է՝

1, Գարնան զարթոնքի հետ մարզում մշակութային կյանքի արժևորելը և ակտիվացնելը, մարզի տարբեր ոլորտներում աշխատող վաստակաշատ կանանց գնահատանքի արժանացնելը, կնոջ էությունը վերաիմաստավորելը՝ լինի մայր, քույր, կին կամ պարզապես անծանոթ աղջիկ:

2. Կազմակերպել ՀՀ Սյունիքի մարզպետի հանդիպումը զինված ուժերում, ոստիկանությունում, արտակարգ իրավիճակներում ծառայող կանանց, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում ավանդ ունեցող կին մանկավարժների, առողջապահության ոլորտում կին աշխատողների, կին ստեղծագործողների և մտավորականների հետ և նրանց խրախուսման արժանացնելը:

3. Հյուրասիրություն:

04.03.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գ.Թադևոսյան

Подписано TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019թ. մարտի 5-ի
N 30-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Նվերներ	4237	160.0
2	Ներկայացուցչական ծախսեր	4237	14.0
3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	26.0
4	Ընդամենը		200.0

04 03.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար՝

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

Գ.Թադևոսյան